որ կը գոհանայ միայն աշխարհաբար քարոզելով, կը դառնայ ընդհանուր դժգոհութեան առարկայ: Նա պարտաւորուած է միշտ էլ՝ գրաբար լեզուով ասութիւններ գործածել, Ս. Գրքից քաղուածքներ առաջ բերել,— մի բան որ նա մեծ մասով անդիր է արել եւ ինքն էլ չէ հասկանում այդ լեզուն»:

Իր աշխատութեան զանազան հատուածներում եւ կամ յաւելուածի ձեւով Հաքստհաուզէն առաջ է բերում նաեւ մի չարք հեքիաթներ, առասպելներ եւայլն, որոնք հաղորդել են նրան մեծ մասով Խաչ. Աբովեան, միւս մասով էլ նրա հօրեղբայր Յարութիւնը եւ վերը՝ յիշատակուած գերմանացի Պետեր Նէյը: Ինչպէս երեւում է՝ Աբովեան խոստացած է եղել Հաքստհաուզէնի ուղարկել հայ ժողովրդական երգեր եւս, բայց անկարող է եղել կատարել խոստումը (I. 316), անտարակոյս իր վերահաս վախճանի պատճառով:

Մի երկրորդ յօդուածով ընթերցողներին կը ծանօթացնենք Հաքստհաուզէնի աշխատութեան այն հատուածներին, որոնք իրենց տեսակում եղակի աղբիւր են հանդիսանում ժամանակակից հայ կեանքը ուսումնասիրելու տեսակէտից:

ԹՈՐԳՈՄԵԱՆՔ

Գրեց՝ Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Հայոց պատմահայրը, Մովսէս Խորենացի, Թորգոմ անուամբ կը կոչէ մեր Հայկ նախահօր հայրը: Ասոր համար է որ հայերս ինքզինքնիս կը կոչենք նաեւ Տունն կամ Տոհմն Թորգոմայ:

Եղեկիէլ մարգարէն Տիւրոսի մասին Տէրոջը պատգամն խօսած ատեն կ'ըսէ.—

«Եւ ի տոհմէ Թորգոմայ ձիովք եւ հեծելովք եւ ջորւովք լցին զվաճառս քո»: Յոյն պատմահայրն Հերոդոտոս եւս կը վկայէ թէ հարուստ էր «Տարգիտաւս»ի տունը, եւ անասնապահութիւնն էր գլխաւոր աղբիւրն անոր հարստութեան: Թորգոմայ կամ Տարգիտաւսի տան տիրապետութիւնը կը տարածուէր Հայաստանի հարաւային արեւմտեան մասանց վրայ:

Ո՞վ էր այս Թորգոմեան տոհմը, որու գոյութեան մասին այսքան բացորոշ վկայութիւններ կը հաղորդեն մեզ վաղեմի Հայաստանի երեք ամենամեծ պատմական հեղինակութիւնները — Ս. Գիրք, Հերոդոտոս եւ Մ. Խորենացի: Որոնցմէ՞ կը բաղկանար այս Տունն Թորգոմայ, որ կը տիրէր Փոքր Ասիոյ Հարաւային Արեւմտեան մասանց մէջ բաւական ընդարձակ երկրի մը վրայ, որ մեծ հռչակ ունէր անասնապահութեան մէջ եւ որու վաճառելի ձիերն ու ջորիները կը լեցնէին Միջերկրականի վաճառաշահ քաղաքներն: Պատմական որեւէ վաւերականութիւն կրնա՞նք ընծայել Թորգոմ անուն նախահօր մը գոյութեանը մասին եղած այս վկայութեանց, կամ թէ պ. Կ. Յ. Բասմաջեանի հետ պիտի վճռենք որ «հաստատուն ռեւէ հիմ չունի» այս աւանդութիւնը, այլ «կեղծիք մրն է» լոկ: Տեսնենք:

Անգլիոյ Բրիտանական Թանգարանին մէջ կը պահուի գաճէ կաղապարն այս դիմաքանդակին, որ արծաթի վրայ փորագրուած բնագրէն առնուեցաւ՝ երբ ծախու հանուած էր ան: Հիմա կորսուած է բնագիրը: Յայտնապէս կնիք մը ըլլալ կը թուի ան: Մեր նիւթին համար ծայր աստիճան կարեւորութիւն ունի այս դիմաքանդակ կնիքն կամ զարդակոճակը եւ կամ ճարմանդը: